

**2.02.01 – ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՈՒԾՈՒՄ.
ԿԵՐԱԿՐՄԱՆ և ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**

**Գյուղատնտեսական կենդանիների կերակրման և անասնաբուծության
տեխնոլոգիա**

ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տավարի ծագումը, էվոլյուցիան և բնութագրումը. Տավարի ծագումը: Տավարի նախնիների ու ցեղակիցների բնութագրումը: Տավարի ընտելացումն ու ընտանեացումը: Ընտանեցման ընթացքում տավարի կրած փոփոխությունները: Տավարի աճի և զարգացման ուսումնասիրումը: Տավարի կենսաբանական առանձնահատկությունները:

Մթերատվության տարբեր ուղղության տավարի արտակազմվածքը, համակազմվածքը, ներքնակազմվածքը, դրանց նշանակությունը կենդանիների գնահատման և ընտրության ժամանակ: Կենդանիների նշադրումը:

Տավարի կաթնային մթերատվությունը. Կաթի գոյացումը: Կաթի արտազատումը: Կաթի կազմը և հատկությունները: Կաթնային մթերատվության գնահատումը: Կրծի ձևավորումը, զարգացումը, մորֆոֆունկցիոնալ հատկությունները և գնահատումը: Կաթնային մթերատվության վրա ազդող գործոնները: Համահարաբերակցական կապը կաթնային մթերատվության ցուցանիշների միջև:

Տավարի մսային մթերատվությունը. Մսային մթերատվության ցուցանիշները և հաշվառումը: Սպանդից ստացվող ենթամթերքները: Մսեղիքի ձևաբանական կազմը: Մսեղիքի խոհարարական օգտագործումը, սննդային և կենսաբանական արշեքը: Մսի քիմիական և ամինաթթվային կազմը: Մսի որակական ցուցանիշները: Կաշվեհումքը և բնութագրումը: Մսային մթերատվության վրա ազդող գործոնները:

Տավարի ցեղերը. Կաթնային, կաթնամսային և մսային ուղղության մասնագիտացված ցեղեր:

Տավարի նորոգման էգ մատղաշի աճեցման տեխնոլոգիան. Անահատական աճն ու զարգացումը: Մարսողության և նյութափոխանակության հասակային առանձնահատկությունները: Մատղաշի աճն ու զարգացումը օնտոգենեզում: Առողջ հորթերի ստացումը: Մատղաշի աճի պլանավորումը: Մատղաշի աճեցման կազմակերպումը, կերակրումն ու պահվածքը: Նախրի նորոգման համար էգ մատղաշի պահանջի հաշվարկը: Աճի ու զարգացման հաշվառումը:

Կաթի արտադրության տեխնոլոգիան. Մասնագիտացումը տավարաբուծությունում: Կովերի պահվածքի եղանակներն ու սիստեմները: Կթի տեխնոլոգիան, կաթի նախնական մշակումը, կաթի տեղափոխումը, կաթի ընդունումը, հանձնումը և հումք-կաթի հաշվարկը: Մթերվող կաթի նկատմամբ պահանջները կապված նաև ԵԱՏՄ-ի այլ երկրների կաթի ստանդարտների հետ: Կովերի կերակրման տեխնոլոգիան: Կերերի նախապատրաստումը և բաշխումը: Ջրելու մեքենայացումը: Գոմաղբի հեռացման և ուտիլիզացման տեխնոլոգիան:

Տավարամսի արտադրության տեխնոլոգիան՝ տավարամսի արտադրության տեխնոլոգիան կաթնային տավարաբուծությունում: Պահվածքի եղանակները: Տեխնոլոգիական պրոցեսների մեքենայացումը: Տավարամսի արտադրությունը մասնագիտացված մսային տավարաբուծությունում: Մսային տավարաբուծության առանձնահատկությունները: Մսային տավարաբուծության տեխնոլոգիան: Պահվածքի եղանակները: Նախրի վերարտադրությունը: Մսային տավարի կերակրումը և խնամքը:

Տավարի նախրի վերարտադրության անասնաբուժական հիմունքները. Տավարի վերարտադրողական ունակությունները: Սեռական ցանկություն և սեռական ցիկլ: Կովերի և էգ մատղաշի նախապատրաստումը սերմնավորմանը: Բնական և արհեստական սերմնավորումը տավարաբուծությու-

նում: Սաղմերի փոխպատվաստումը: Կովերի սերմնավորման և ծիների պլանավորումը: Կովերի ստերջության պատճառները և պայքար դրանց դեմ: Տավարի նախրի կառուցվածքը ըստ սեռատարիքային խմբերի:

Տոհմային աշխատանքը տավարաբուծությունում. Տավարի բուծման մեթոդները: Ընտրության գենետիկական պարամետրերի օգտագործումը տավարի սելեկցիայում: Տոհմային ընտրությունը և զույգընտրությունը տավարաբուծությունում: Գծեր, ընտանիքներ և դրանց նշանակությունը տավարի սելեկցիայում: Արտադրող ցուլերի գնահատումը և ընտրությունը կաթնատու և կաթնամսատու տավարաբուծությունում: Կովերի գնահատումը և ընտրությունը: Մատղաշի գնահատումը և ընտրությունը: Տավարի բոնիտավորումը համալիր հատկանիշներով:

ՈՂԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ոչխարների և այծերի ծագումը, կենսաբանական առանձնահատկությունները, համակազմվածքը և արտակազմվածքը: Ոչխարների և այծերի ընտանեացույցը, էվոլյուցիան: Ոչխարների և այծերի կենսաբանական առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները: Ոչխարների աճն ու զարգացումը, համակազմվածքը և արտակազմվածքը: Ոչխարների աճի ու զարգացման մեթոդները:

Ոչխարների մթերատվությունը: Բուրդ և բնական ու արհեստական համանման հումքի տեխնիկական և տեխնոլոգիական տարբերությունները: Հասկացություն բրդի մասին: Ոչխարների մաշկի ձևաբանական կազմը և բրդաթելի առաջացման և աճի կենսաբանական հիմունքները: Բրդաթելերի հյուսվածաբանական կառուցվածքի դերը տարբեր գործվածքների մշակման գործում: Գեղմը և նրա տարրերի առաջացման նշանակությունը: Ճարպաքրտինքը, քանակական և որակական գնահատումը: Բրդի վազված ելքի վրա ազդող գործոնները և նշանակությունը: Բրդի քիմիական կազմը և քիմիական հատկությունները: Բրդի ֆիզիկա-

տեխնիկական և տեխնոլոգիական հատկությունները: Բրդի արատները, աղբոտվածությունը, գոյացման, վերացման տեխնիկական և տեխնոլոգիական ուղիները: Բրդի դասակարգման և գնահատման սկզբունքները և համեմատությունը ԵԱՏՄ և այլ երկրների բրդի ստանդարտների հետ: Ոչխարների բրդային մթերատվությունը, գենոտիպի, կերակրման և այլ գործոնների ազդեցությունը դրա վրա: Ոչխարների խուզի տեխնոլոգիական նոր մոտեցումները և խնդիրները:

Ոչխարների և այծերի մսայնության ձևավորումը, կենսաբանական և ֆիզիոլոգիական հատկությունները: Գենոտիպի և արտաքին գործոնների ազդեցությունը ոչխարների մսային մթերատվության վրա: Ոչխարամսի ձևաբանական և քիմիական կազմը: Ոչխարամսի և այծամսի արտադրության տեխնոլոգիան և մատղաշամսի ավելացման ուղիները հանրապետությունում:

Ոչխարենիների և այծենիների տեխնոլոգիական առանձնահատկությունները: Մորթե, մուշտակե, կաշվե ոչխարենիների և այծենիների մոնիթորինգը և պահանջարկը, դրանց ապրանքագիտական գնահատումը և դասակարգումը: Ոչխարենիների որակի վրա ազդող գործոնները: Ոչխարենիների և այծենիների նախնական մշակման տեխնոլոգիան:

Գառնենիներ: Հասկացություն գառնենիների մասին: Գառնենիների հիմնական տեխնոլոգիական հատկությունները և դրանց գնահատումը:

Ոչխարի և այծի կաթ: Ոչխարների և այծերի կաթնային մթերատվությունը և դրա վրա ազդող գործոնները: Այծի կաթը՝ կենսատու ըմպելիք: Ոչխարների կթի կազմակերպման հիմնավորումը և տեխնոլոգիան: Կաթի արտադրության տեխնոլոգիան և կաթնատվության դերը ընտրասերման գործընթացում:

Ոչխարների և այծերի ցեղերը: Նրբագեղմ, կիսանրբագեղմ, կիսակոպտաբուրդ, կոպտաբուրդ ցեղերը: Հայաստանում բուծվող ցեղերը և դրանց կատարելագործման ուղիները: Այծաբուծության զարգացման ուղիները և

խնդիրները Հայաստանում: Համաշխարհային այծաբուծության տենդենցները:

Տոհմային գործի պլանավորումը և կազմակերպումը ոչխարաբուծությունում և այծաբուծությունում: Ոչխարների և այծերի բուծման, ընտրության և զույգընտրության գենետիկական հիմունքները: Ոչխարների և այծերի կենսաբանական տարբերությունները էվոլյուցիայի ընթացքում, դրանց զարգացումները: Ոչխարների և այծերի հատկանիշների և հատկությունների ժառանգելիությունը, կրկնելիությունը, հարաբերակցական կապը:

Ոչխարաբուծության վարման տեխնոլոգիան: Հոտի վերարտադրության առկա խնդիրները, մատղաշի աճեցումը: Ոչխարների և այծերի զուգավորման ժամկետների ընտրության հիմնավորումը Հանրապետության տարբեր գոտիներում: Ոչխարների զուգավորման հասակը և եղանակները: Ոչխարների արհեստական սերմնավորման առանձնահատկությունները և խնդիրները: Ոչխարների ծնի տարբեր ժամկետների տնտեսական և անասնաբուժական հիմնավորումը: Ծնի նախապատրաստումը և անցկացումը: Գառների և ուլերի աճեցման առանձնահատկությունները և եղանակները կախված նրանց օգտագործման նպատակներից և հիմնավորումը կաթնային և հետկաթնային շրջանում: Կաթի փոխարինիչների օգտագործման հիմունքները և արդյունավետությունը: Տնտեսվարման նոր պայմաններում մթերքների և հումքի արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Ոչխարների և այծերի կերակրումն ու պահվածքը, ոչխարների և այծերի արոտագիրացումն ու բուծումը: Ոչխարների և այծերի պահվածքի սխտեմների առանձնահատկությունները ՀՀ գոտիներում և վերլուծությունը:

ԽՈՋԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խոզերի տնտեսական, կենսաբանական, էկոլոգիական և էթոլոգիական առանձնահատկությունները:

Խոզերի տնտեսական և կենսաբանական հիմնական առանձնահատկությունները՝ պոլիէստրիկությունը, բազմապտղատվությունը, վաղահասությունը, ամենակերությունը և հարմարվողականությունը: Աճի և զարգացման առանձնահատկությունները: Մսա-ճարպային մթերատվության և մսի որակի ձևավորումը: Այդ հատկությունների օգտագործումը մսի արտադրության գործում, սթրեսային գործոնները, դրանց ազդեցությունը մսային մթերատվության և խոզի մսի որակի վրա:

Խոզերի հավասարակշռության սթրեսային խնդիրները: Սթրեսների թեստավորման մեթոդները:

Խոզերի համակազմվածքը, արտակազմվածքը և ներքնակազմվածքը, դրանց համահարաբերակցական կապը մթերատվության հետ:

Խոզերի ծագումը: Խոզերի ցեղերը: Ցեղագոյացման պրոցեսները:

Խոզերի արդյունավետ կերակրման և ջրամատակարարման հիմունքները, կերի բազայի կազմակերպումը:

Ֆերմայի արդյունավետ վարման պայմանները: Ճյուղի վարման ինտենսիվության հիմնական ցուցանիշները: Ցեղի ընտրությունը: Բուծման մեթոդները, ծինների ցիկլային-խմբային սիստեմները: Տեխնոլոգիական հաշվարկները: Խոճկորների փուլային աճեցումը /երկփուլային, եռափուլային, միափուլային/: Խոզերի պահվածքի ձևերը: Տեխնոլոգիական նորմաները: Միկրոկլիմայի ստեղծման մեթոդները: Գոմաղբի հավաքելը և օգտագործումը: Խոզերի սպանդը:

Հոտի վերարտադրության կազմակերպման տեխնոլոգիան: Վարազների և մերունների սեռական զարգացման առանձնահատկությունները: Վարազների նախապատրաստումը զուգավորման՝ հասակը և կենդանի զանգվածը: Վարազների կերակրումը և պահվածքը: Վարազների օգտագործումը ձեռնքաշ զուգավորման և արհեստական սերմնավորման ժամանակ: Երիտասարդ և հասակավոր վարազների օգտագործման ինտենսիվությունը: Հիմնական, ստուգվող մերունների և վերանորոգման

մատղաշի պահվածքը: Սեռական ցիկլը: Սերմնավորման ժամկետները և հաճախականությունը: Ցանկության մեջ գտնվող մերունների հայտնաբերման տեխնիկան: Մերունների հղիության վաղ ախտորոշման մեթոդները: Սաղմերի աճը և զարգացումը: Մերունների ծնի նախապատրաստումը և անցկացումը: Բնի հավասարեցումը: Վարազների, զուգավորման, պայմանական հղի, հղի և ծծմայր մերունների համար վանդակների տարատեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները ազատ-բակային, բակագուրկ և Ֆիքսված պահվածքի պայմաններում: Մայրական գլխաքանակի օգտագործման ինտենսիվացման հիմնական մեթոդները՝ մերուններից խոճկորների վաղ անջատման տեխնոլոգիան և նշանակությունը:

Ծծկեր խոճկորների, մորից անջատված և վերանորոգման մատղաշի աճեցման տեխնոլոգիան: Ծծկեր խոճկորների կենսաբանական առանձնահատկությունները՝ իմունիտետը, մարսողությունը, օրգանիզմի ջերմակարգավորումը, նյարդային համակարգը, նյութափոխանակությունը, ատամների սիստեման: Ծծկեր խոճկորների սննդանյութերի պահանջը: Խոճկորների վաղ՝ լրացուցիչ կերակրման նշանակությունը, ծծկեր խոճկորների կերակրման սխեմաների հիմնավորումը: Լավագույն տեխնոլոգիական պարամետրերը խոճկորների աճեցման ժամանակ: Ծծկեր խոճկորների անկումների կանխումը, խոճկորների անջատման տեխնիկան:

Մորից անջատված խոճկորների աճեցման տեխնոլոգիական պարամետրերը՝ խմբերի մեծությունը, 1 գլխի հաշվով վանդակի մակերեսը, կերակրման ճակատը:

Վաղ անջատված խոճկորների և վերանորոգման մատղաշի աճեցման առանձնահատկությունները: Խմբերի մեծությունը, 1 գլխի հաշվով վանդակային մակերեսը, կերակրման ճակատը, միկրոկլիման: Զբոսանքի և արոտային պահվածքի նշանակությունը: Խոշոր խոզաբուծական համա-

լիրների մայրական հոտի համալրման համար վերանորոգման մատղաշի աճեցման առանձնահատկությունները: Խոզերի մատղաշի համար կերակրման նորմաները և օրինակելի կերաբաժինները:

Խոզերի բտման տեխնոլոգիան: Բտման տեսակները՝ մսային, բեկոնային, մսա-ճարպային, ճարպային, հասակավոր խոզերի բտումը: Խոզերի բտման ինտենսիվացումը: Կերակրման տիպերի և կերերի տեսակների ազդեցությունը խոզի մսի որակի վրա: Խոզերի բտման առանձնահատկությունները սննդի մնացորդները օգտագործելիս: Բտման ժամանակ տեխնոլոգիական պարամետրերը՝ խմբերի մեծությունը, վանդակային մակերեսը, կերակրման ճակատը, խոզանոցի միկրոկլիման: Բտման առաջավոր մեթոդները:

Խոզերի ճամբարա-արոտային պահվածքը:

Տոհմային աշխատանքը խոզաբուծությունում: Բոնիտավորման առանձնահատկությունները տոհմային և ապրանքային տնտեսություններում: ՊՏԳ խոզերին գրանցելու համար պահանջները:

ՁԻԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ձիերի ծագումը և էվոլյուցիայի ընթացքում կրած փոփոխությունները:

Ձիերի արտակազմվածքի, համակազմվածքի և ներքնակազմվածքի առանձնահատկությունները կապված տնտեսական տիպի հետ: Ձիերի արտադրողականությունն իջեցնող արտակազմվածքային արատներն ու թերությունները: Ձիերի շարժման բնական և արհեստական ձևերը:

Ձիերի վերարտադրությունը: Բուծման տեխնիկան: Ձիերի թույրը և նշանները: Մտրուկների աճեցման տեխնոլոգիան ձիերի պահվածքի տարբեր սիստեմների դեպքում:

Ձիերի ցեղերի տնտեսական դասակարգումը, բնութագրումը և ցեղի հետ տարվող տոհմային աշխատանքի առանձնահատկությունները:

Ձիերի բանող հատկությունները և օգտագործման հիմնական ուղղությունները: Բանող ձիերի կերակրման, պահվածքի և օգտագործման տեխնոլոգիան աշխատանքի տարբեր ծանրաբեռնվածության կատեգորիաների դեպքում:

Ձիերի կաթնային և մսային մթերատվությունը: Ձամբիկների կթելու տեխնոլոգիան: Կաթի հաշվառումը: Կումիսի արտադրության տեխնոլոգիան և կաթի քիմիական կազմը:

Ձիերի երամակային և ախոռային պահվածքի ձևերը:

Ձիերի մարզման և ձիարշավային փորձարկման առանձնահատկությունները: Ձիասպորտ և ազգային խաղեր:

Տոհմային աշխատանքը ձիաբուծությունում: Բուծման մեթոդները:

Հիբրիդացում: Ջորինների ստացումը և օգտագործումը: Տոհմային և ոչ տոհմային ձիերի բնիտավորումը:

ԹՈՇՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թռչունների ծագումը, կենսաբանական առանձնահատկությունները արտակազմվածքը և համակազմվածքը:

Գյուղատնտեսական թռչունների մթերատվությունը: Ձվային մթերատվությունը: Ձվագոյացման պրոցեսը, ձվատվության ցիկլը, ինտերվալը և ութմիկայնությունը: Ձվատվությունը և ձվի զանգվածը: Ձվի ձևաբանական և քիմիական կազմը: Ձվատվության հաշվառումը և գնահատումը: Տարբեր գործոնների ազդեցությունը ձվային մթերատվության վրա: Մսային մթերատվությունը: Բրոյլեր ճտերի և հասակավոր թռչունի նշանակությունը թռչնամսի ընդհանուր արտադրության գործում: Մսային մթերատվությամբ վրա ազդող գործոնները: Թռչունների վերարտադրող ունակությունը: Վերարտադրող ունակության և մթերատվության մակարդակի կապը: Թռչնաբուծության կողմնակի արտադրանքը:

Գ/թ տեսակները, ցեղերը և կրոսները:

Տոհմային աշխատանքը թռչնաբուծությունում: Տոհմային աշխատանքի նշանակությունը թռչնաբուծական մթերքների ավելացման գործում: Թռչունների ընտրությունը և զույգընտրությունը, բուծման մեթոդները:

Գ/թ ճտահանությունը: Ճտահանությունը որպես թռչնաբուծության հիմնական օղակը: Ինկուբացիոն ձվերին ներկայացվող հիմնական պահանջները: Հավերի ձվերի ինկուբացիայի ռեժիմը: Սաղմի զարգացման Ֆիզիոլոգիան: Մյուս տեսակի թռչունի, ձվերի ինկուբացիայի առանձնահատկությունները: Հիմնական տեսակների ինկուբատորների դասակարգումը և տեխնիկական բնութագրումը: Ձվերի կենսաբանական ստուգումը: Սատկած սաղմերով ձվերի ախտաբանական հերձումը: Դուրս եկած ճտերի որակն ու գնահատումը:

Թռչունների կերակրման առանձնահատկությունները:

Ձվի արտադրության տեխնոլոգիական պրոցեսը: Սննդի համար արտադրվող ձվի մասնագիտացված ձեռնարկությունները և միավորումները: Ինկուբացիոն ձվի արտադրության արտադրամասը: Կրոսների օգտագործումը ձվային ուղղության թռչնաբուծությունում: Ծնողական հոտի մեծությունը, կառուցվածքը ըստ սեռի և հասակի, շուրջտարյա համալրումը: Ածան հավերի արդյունավետ օգտագործման ժամկետները: Հարկադրական փետրափոխման նշանակությունը: Ճտահանության արտադրամասը: Արդյունաբերական և ծնողական հոտի արտադրամասերի հավերի գլխաքանակի շուրջտարյա համաչափ վերարտադրության, ձվերի ճտահանության կազմակերպման առանձնահատկությունները: Վերանորոգման մատղաշի աճեցման արտադրամաս:

Վերանորոգման մատղաշի աճեցման տեխնոլոգիական սխեման: Ածան հավերի և վերանորոգման մատղաշի աճեցման արտադրամասերի ցիկլերի հարաբերությունները: Մատղաշի աճեցումը վանդակային պահվածքում: Արտաքին գործոնների ռեժիմը՝ ջերմաստիճանը, խոնավությունը, օդի բաղադրությունը, լուսային ռեժիմի նշանակությունը սեռական

հասունացման կարգավորման և հետագա բարձր մթերատվության դրսևորման գործում: Սննդի համար ձվի արտադրության արտադրամաս: Արդյունաբերական հոտի հավերի համալրման պայմանները և ժամկետները: Սննդի համար ձվերի տեխնոլոգիական մշակումը և ձվի ենթամթերքների արտադրությունը:

Թռչնամսի արտադրության տեխնոլոգիական պրոցեսը: Թռչնամսի արտադրության առավելությունը բրոյլեր-ճտերի աճեցման և բտման դեպքերում: Ինկուբացիոն ձվերի արտադրության արտադրամաս: Ծնողական հոտի կրոսների օգտագործումը հիբրիդային բրոյլերների արտադրության համար: Ծնողական հոտի համալրման ժամկետները և շահագործումը: Արհեստական սերմնավորումը: Վերանորոգման մատղաշի աճեցումը մսային ուղղության հավերի և աքաղաղների համար: Բրոյլերների մսի արտադրությունը:

Բրոյլերների աճեցման ժամկետները:

Հնդկահավերի, բադերի, սագերի մսի արտադրության անձնահատկությունները:

Խայտահավերի, լորերի և աղավնիների մսի արտադրության առանձնահատկությունները:

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ճագարների մթերատվությունը: Մսային մթերատվությունը: Մորթեղենային մթերատվությունը: Ճագարների աղվամազային մթերատվությունը: Ճագարների օգտագործումը որպես լաբորատոր կենդանիներ:

Ճագարների ցեղերի դասակարգումը ըստ մթերատվության ուղղության, խոշորության և մազածածկի երկարության:

Տոհմային աշխատանքը ճագարաբուծությունում:

Ճագարաբուծության տեխնոլոգիան: Ճագարների պահվածքը: ճագարաբուծական Ֆերմաների տեղի ընտրությունը: ճագարաբուծական Ֆերմա-

ներին ներկայացվող տեխնոլոգիական պահանջները: Ճագարների պահվածքի սխտեմները՝ համակարգերը դրսի վանդակասրային և շեղերային ճագարաբուծանոցներում: ճագարաբուծական Ֆերմաներում միկրոկլիմայի պահանջները և նրա վիճակի հսկողությունը: ճագարաբուծական Ֆերմաներում կիրառվող արտադրական պրոցեսների մեքենայացումը: Ճագարների տեղափոխումը:

Ճագարների հոտի վերարտադրման հիմունքները: Ճագարների բազմացման առանձնահատկությունները՝ սեռահասունացումը, առաջին զուգավորման հասակը, հղիության տևողությունը, բազմացման օրինաչափությունները: ճագարաբուծական Ֆերմայի զուգավորման և ծնի արտադրական պլանի կազմումը: Ճագարամայրերի զուգավորման և ծնի անցկացման կազմակերպման տեխնոլոգիան: Հղի Ճագարամայրերի պահվածքի ու խնամքի տեխնոլոգիան: Ճագարի մատղաշի աճեցման տեխնոլոգիան մինչև մորից անջատելը և մորից անջատելուց հետո:

Ճագարների կերակրումը: Տարբեր Ֆիզիոլոգիական վիճակի ճագարների պահանջը սննդարար նյութերի նկատմամբ: Ճագարների համար օգտագործվող հիմնական կերատեսակների բնութագրումը և նրանց սննդարար արժեքը: Կերերի նախապատրաստումը կերակրման: Կերաբաժիններում տարբեր կերերի հարաբերակցությունը, կերակրման տիպը և տեխնիկան: Ճագարների կերակրման նորմաները: Ճագարների կերակրումը հատիկավորված կերերով: Համակցված և լիարժեք հատիկավորված կերերի բնութագրումը:

ԳԱԶԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գազանաբուծության ժողովրդատնտեսական նշանակությունը: Մորթատու գազանների կենսաբանական և տնտեսական առանձնահատկությունները և բուծումը ոչ ազատ պայմաններում:

Գազանների բռնիտավորման առանձնահատկությունները և գնահատման ստանդարտները:

Գազանների ընտրության փուլերը և հատկանիշները: Գունավոր աղվեսների կենսաբանական և տնտեսական առանձնահատկությունները:

Տրամախաչման սխեման և գունավորումը ըստ մատղաշի ֆենոտիպի:

Գազանների բուժման մեթոդները:

Գազանաբուծությունում կիրառվող միջցեղային տրամախաչման եղանակները, կենսաբանական էությունը և գործնական խնդիրը:

Գազանամորթու մազաձածկույթը և ստանդարտները:

Գունավոր աղվեսների բուժման տեխնիկան և մեթոդը:

Անասնաբուժական հաշվառման առանձնահատկությունները գազանաբուծությունում:

Գազանների հղիությունը, ծինը և լակտացիան: մատղաշի աճեցման տեխնոլոգիան կաթնային և հետկաթնային շրջաններում:

Գազանների սպանդի տեխնիկան և գազանամորթու նախնական մշակումը:

Էգերի առաջին զուգավորման հասակը, վերարտադրական ֆունկցիաների նյարդահումորալ պայմանավորվածությունը: Նախապատրաստումը զուգավորման և կիրառման տեխնիկան:

ԿԵՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՆԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերերի սննդարարության հասկացությունը, որպես կենդանիների էներգիայի, սննդարար ու կենսաբանական ակտիվ նյութերի պահանջի բավարարման հատկություն: Կերի և կենդանու օրգանիզմի քիմիական կազմը:

Ջրի, պրոտեինի, ճարպի, ածխաջրերի, հանքային տարրերի, վիտամինների և կենսաբանական այլ նյութերի ֆիզիոլոգիական դերը կենդանու օրգանիզմում ընթացող մարսողության, նյութափոխանակության և սնման

գործում: Կերատեսակների մարսելիությունը: Կերատեսակների մարսելիության որոշման մեթոդները և տեխնիկան: Կերատեսակների մարսելիության վրա ազդող գործոնները: Կենդանու օրգանիզմում սննդարար նյութերի և էներգիայի փոխանակության որոշման մեթոդները: Հասկացություն կերի էներգետիկ (ընդհանուր) սննդարարության մասին: Հանրապետությունում կերի ընդհանուր սննդարարության գնահատման գործող համակարգը:

Հասկացություն կերի պրոտեինային սննդարարության մասին: Փոխարինելի և անփոխարինելի ամինաթթուներ: Ոչ սպիտակուցային ազոտային միացությունների սննդային արժեքը որոճող և ոչ որոճող կենդանիների համար: Պրոտեինի պահանջի ապահովման ուղիները անասնապահությունում:

Կերի հանքային սննդարարությունը: Հանքային տարրերի դերը գյուղատնտեսական կենդանիների սնման պրոցեսում: Մակրոտարրերի և միկրոտարրերի պարունակությունը կերում, նրանց յուրացումն ու կուտակումն օրգանիզմում: Կերի մոխրի ռեակցիան: Վիտամինային սննդարարություն: Վիտամինները և նրանց դերը գյուղատնտեսական կենդանիների սնման ու նյութերի փոխանակության պրոցեսում: Ճարպալուծ ու ջրալուծ վիտամիններ: Վիտամինների անբավարարությունից առաջացած հիվանդություններ: Կերերի համալիր գնահատումը:

ԿԵՐԵՐ

Հասկացություն կերի մասին: Կերատեսակների դասակարգումն ու անասնաբուժական բնութագիրը: Կերերի քիմիական կազմի ու սննդարարության վրա ազդող գործոնները:

Կանաչ կեր, սննդարարությունը և դիետիկ հատկությունները: Կանաչ կոնվեերի կազմակերպումը: Կանաչ զանգվածի պահածոյացման ձևերը և տեխնոլոգիան: Սիլոսացման և սենսժացման գիտական հիմունքները:

Լավ սիլուսացվող, վատ սիլուսացվող և չսիլուսացվող կանաչ զանգված:
Համակցված սիլոս: Սիլոսացման և սենսժացման համար օգտագործվող
կառույցները: Քիմիական պահածոյացում:

Կոպիտ կերի պատրաստման և պաշարման տեխնոլոգիական պահանջ-
ները: Կոպիտ կերի նախապատրաստումը տարբեր տեսակի կենդանի-
ներին կերակրելու համար: Խոտալյուր և վիտամինային ալյուր, պատ-
րաստման տեխնոլոգիան: Խոտալյուրի ու վիտամինային ալյուրի պահ-
պանումը, հակաօքսիդանտների օգտագործումը:

Ծղոտ: Հացազգի և թիթեռնածաղկավոր ծղոտի քիմիական կազմը և
սննդարարությունը: Ծղոտի ուտելիության, սննդարարության և մարսե-
լիության բարձրացման ուղիները:

Հատիկային կերատեսակները: Նրանց նշանակությունը անասնապահու-
թյունում: Հացազգի և ընդեղեն հատիկներ, քիմիական կազմը և սննդա-
րարությունը: Հատիկային կերատեսակների նախապատրաստումը տար-
բեր տեսակի գյուղատնտեսական կենդանիներին կերակրելու համար:

Ալյուրի, ձեթի, օսլայի, շաքարի և սպիրտի արտադրության մնացորդները,
դրանց քիմիական կազմը և սննդարարությունը: Սննդի մնացորդներ:

Կենդանական ծագման կերատեսակներ, դրանց դերը գյուղատնտեսա-
կան կենդանիների սնման պրոցեսում: Քիմիական կազմը և սննդարա-
րությունը:

Հանքային կերատեսակներ /կավիճ, կիր, ոսկրալյուր, պրեցիպիտատ,
կերի ֆոսֆատներ, միկրոտարրերի լրացակերեր/: Գյուղատնտեսական
կենդանիների կերակրման եղանակները:

Վիտամինային խտանյութեր: Արդյունաբերական եղանակով ստացվող
վիտամիններ:

Խմորասնկեր, սննդային արժեքը: Տարբեր տեսակի կենդանիների կե-
րակրման առանձնահատկությունները: Մանրէակենսաբանական սինթե-
զից ստացված կերատեսակներ: Ոչ սպիտակուցային ազոտային միացու-

թյուններ, կենդանիներին կերակրելու տեխնիկան: Կերի հակաբիոտիկներ և այլ կենսաբանական ակտիվ նյութեր:

Հասկացություն համակցված կերի մասին: Նրանց նշանակությունը անասնապահական մթերքների և հումքի արտադրության ինտենսիվացման գործում: Համակցված կերի տեսակները: Սպիտակուցա-վիտամինահանքային լրացակերեր: Պրեմիքսներ: Հատկավորված համակցված կերեր: Համակցված կերի պահպանումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄ

Կերակրման նորման, որպես սննդարար նյութերի պահանջի ապահովման պայման: Տարբեր գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմավորման ցուցանիշները: Հասկացություն կերաբաժինների մասին: Կերաբաժինների հաշվեկշռումը /լիարժեք ու թերարժեք կերաբաժիններ/: Կերաբաժնի կառուցվածքը ու կերակրման տիպը: Տարբեր տեսակի տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի և մթերատվության կենդանիների էներգիայի սննդարար, կենսաբանական ակտիվ նյութերի, պահանջի որոշումը:

Տավարի կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության տավարի համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Ոչխարի կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության ոչխարի համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Խոզերի կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճա-

կի ու մթերատվության խոզերի համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Ձիերի կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության ձիերի համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Թռչունների կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակ ու մթերատվության թռչունների համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Ճագարների ու մորթատու գազանների կերակրման առանձնահատկությունները: Կերակրման նորմաներն ու կերաբաժինները տարբեր տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակ ու մթերատվության ճագարների համար: Կերակրման լիարժեքության հսկողությունը:

Տարբեր տեսակի կերատեսակներից միջին նմուշ վերցնելու տեխնիկան: Կերի որակի որոշման համար կատարվող քիմիական անալիզները և դրանց կատարման մեթոդիկաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան Ե.Ա. և ուրիշներ, Տավարաբուծություն, Մ., 1984 թ.
2. Էռնստ Լ.Կ., Բեգուլչեվ Ա.Պ., Տավարաբուծություն, Մ., 1984 թ.
3. Ոսկանյան Վ.Բ., Հայաստանի տավարաբուծությունը, Եր., 1987 թ.
4. Н.М.Костомахин, Скотоводство, М., 2007 г.
5. Խ.Մ.Սիմոնյան, Տավարաբուծության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2008 թ.
6. Մելքոնյան Մ.Ս., Մարմարյան Յու.Գ., Ոչխարաբուծություն, Եր., 1996թ.
7. Մ.Գ.Քարամյան, Լ.Գ.Մինասյան, Ոչխարաբուծություն / պրակտիկում /, 1979 թ.

8. Г.Р.Литовченко, П.А.Есаулов, Овцеводство - 1 и 2 том, 1972 г.
9. Ռ.Թ.Սարգսյան, Տ.Ժ.Զիրթյան, Ա.Հ.Հովհաննիսյան, Տավարաբուծություն, Եր.2012
10. А.А.Рухкян, М.С.Мелконян и др., Армянская полугрубшерстная порода овец, 1989г.
11. В.К.Целютин, О.Ф.Деревянко, Практикум по овцеводству и технологии производства шерсти и баранины, 1990 г.
12. А.И.Ерохин, С.А Ерохин, Овцеводство, 2004 г.
13. L. Inigues, Y. Marmaryan. Characterization of Small Ruminant Breeds in Central Asia and the Caucasus./ ICARDA, Aleppo – 2009 (p.295–333):
14. Журнал - Овцы, козы, шерстяное дело.
15. Յու.Գ.Մարմարյան, Շ.Ս.Ներսեսյան, Վ.Ա.Արրահամյան և ուր., Անասնաբուծության հիմունքներ, Եր.2001 թ.
16. Գ.Գ.Տողանյան, Ռ.Ս.Վարյան, Գ.Ն.Բաղդասարով, Խոզաբուծություն, տեղեկատու, 1996 թ.
17. Գ.Գ.Տողանյան, Մ.Ն.Մինասյան, Խոզաբուծություն, պրակտիկում, 1982 թ.
18. В.И.Степанов, Свиноводство и технология производства свинины, М., 1991 г.
19. В.Д.Кабанов, Свиноводство, М., 2001 г.
20. Փամբուխչյան Ս.Ա, Խոզաբուծություն, Եր. 2013 թ.
21. Կ.Հ.Պետրոսյան, Թռչնաբուծություն, Եր., 1983 թ.
22. International Poultry Production, Vol 16, N 6, 2008
23. В.И.Фисинин, Г.А.Тардатьян, Промышленное птицеводство, М., 1991г.
24. Б.В.Балобин, Практикум по птицеводству и технологии производства яиц и мяса птицы , Минск,1998, г.
25. К.Б.Свечин и др., Коневодство, М., Колос, 1984 г.
26. С.А.Козлов, В.А.Парфенов, Коневодство. Санкт-Петербург, 2004г.
27. Д.Бишоп, Кормление лошадей, М., 2004 г.
28. П.А.Федотов и др. В помощь фермеру, Коневодство. М., 2000 г.

29. Ю.Н.Барминцев и др., Продуктивное коневодство, М., Колос, 1980 г.
30. Д.В.Степанов и др., Животноводство, М., Колос . 2006 г.
31. Ի.Բ. Պողոսյան, Շ.Ս.Ներսեսյան, Զիարուծություն, Եր., Հայաստան. 1986 թ.
32. Минина И.С., Майоров А.И., Все о кроликах, М., 1988 г.
33. Ильичева Т., Кролики и нутрии, 2001 г.
34. Полезные советы фермеру, Кролиководство / разведение и уход/, 2001 г.
35. Լ.Գ.Մինասյան, Ճափարարուծություն, 1985 թ.
36. В.С. Сысоев, В.Н.Александров, Кролиководство, М., 1985 г.
37. Г.К.Волков, В.М.Репин, „Зоогиенические нормативы для животноводческих объектов,, , М., 1986 г.
38. Մալաթյան Ն.Ա. Գյուղատնտեսական կենդանիների կերակրումը, «Լույս», Եր., 1979թ.
39. Баканов В.Н., Менькин В.К. Кормление с/х животных, Москва, ВС “Агропромиздат” 1981г.
40. Багданов Г.А. Кормление с/х животных, Москва, “Колос” 1981г.
41. Калашников А. И., Клейменов Н.М. Нормы и рационы кормления с/х животных, Москва, Агропромиздат, 2003г.
42. Хохрин И.Н., Кормление с/х животных. “Колос” 2004г.